Պարոն/Տիկին Ստ. Հունանյան ին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ պարոն Մ. Մեսրոպյանին

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Մ. Մեսրոպյան

«11» 03 2025թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Աշխատակցի անունը, ազգանունը՝**
   - ☐ Սեդա Շահինյան,
   - ☐ Արմեն Հունանյան:
2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   - ☐ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ,
   - ☐ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչության պետ:
3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** Բարսելոնա, Իսպանիա, 2025 թվականի մարտի 3-5-ը:
4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝** Շարժական կապի գլոբալ համակարգի ասոցիացիա (GSMA) և ԵՄ արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորողների մարմինների ցանց (EaPeReg):
5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝** Մասնակցել Շարժական կապի գլոբալ համակարգի ասոցիացիայի (GSMA) կողմից Շարժական կապի համաշխարհային կոնգրեսի (WMC) շրջանակում կազմակերպված նախարարական ծրագիրն (Ministerial Programme) և էլեկտրոնային հաղորդակցության եվրոպական կարգավորողների մարմնի (BEREC),

Եվրամիջերկրական կարգավորողների խմբի (EMERG), ԵՄ արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորող մարմինների ցանցի (EaPeReg) և Հեռահաղորդակցության կարգավորողների լատինամերիկյան ֆորումի (REGULATEL) քառակողմ գագաթնաժողովին:

6. Քննարկված թեմաները (հարցերը)՝ 2025 թվականի GSMA կողմից կազմակերպվող նախարարական ֆորումին մասնակցել են ոլորտային նախարարությունների, ազգային և տարածաշրջանային կարգավորող մարմինների, ինչպես նաև ընկերությունների ավելի քան 100 հազար ներկայացուցիչներ՝ շուրջ 205 երկրներից:

Նախարարական ֆորումի ընթացքում քննարկվել են թվային տեխնոլոգիաների զարգացմանը և առաջընթացին, շարժական կապի 4G, 5G, 6G և հետագա տեխնոլոգիաների համար ռադիոհաճախականությունների բաշխման և տրամադրման ռազմավարության մշակմանը, թվային տնտեսության փոխակերպման ֆինանսավորման աղբյուրներին, արտակարգ իրավիճակների ժամանակ շարժական կապի դերին, ինչպես նաև շարժական կապի զարգացման հետագա միտումներին վերաբերող մի շարք հարցեր:

Առավել ուշադրություն է դարձվել շարժական կապի 5G տեխնոլոգիայի ներդրման և զարգացման խնդիրներին, նկատի ունենալով որ տվյալ տեխնոլոգիայի ներդրումը հնարավորություն է տալիս անխափան կերպով միավորել արդյունաբերության ֆիզիկական և թվային ոլորտները, օպտիմալացնել արդյունաբերության ոլորտները, այդ թվում՝ արտադրական գործընթացները, բարելավել մատակարարման շղթայի կառավարումը: Շարժական կապի 5G տեխնոլոգիայի ներդրումը նպաստում է Իրերի ինտերնետի (IoT) և արհեստական բանականության (AI) միջոցով իրականացվող մի շարք միջոցառումների կիրառումը, ինչը խթանում է երկրների տնտեսական զարգացումը:

Էլեկտրոնային հաղորդակցության եվրոպական կարգավորողների մարմնի (BEREC), Եվրամիջերկրական կարգավորողների խմբի (EMERG), ԵՄ արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորող մարմինների ցանցի (EaPeReg) և Հեռահաղորդակցության կարգավորողների լատինամերիկյան ֆորումի (REGULATEL) քառակողմ գագաթնաժողովի շրջանակում քննարկվել է EaPeReg ցանցի երկկողմ համագործակցությունը BEREC ցանցի հետ, ինչպես նաև էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի զարգացման միտումներն ու ապագա կարգավորման մոտեցումները: Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի արագ զարգացումը կարգավորող

մարմիններից պահանջում է արագ և արդյունավետ կերպով հարմարվել նոր մարտահրավերներին և հնարավորություններին՝ կիրառելով ոլորտի զարգացմանը նպաստող թիրախային կարգավորումներ: Այս համատեքստում, քննարկման ընթացքում ցանցերը ներկայացրել են իրենց առաջնահերթությունները և փորձի արդյունավետ փոխանակման կազմակերպումը, որոնց արդյունքներով ցանցերի ներկայացուցիչները պայմանավորվածություն են ձեռք բերել, որ BEREC ներկայացուցիչները և աշխատանքային խմբերի անդամները կաջակցեն EaPeReg ցանցի անդամներին շարժական կապի 5G տեխնոլոգիայի՝ հատկապես մասնավոր 5G ցանցերի ներդրման, դրանց վերաբերող նոր կարգավորումների կիրառման, էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների որակի և դրա հսկողության մեխանիզմների, ինչպես նաև ընկերությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների վերլուծության նոր մոտեցումների կիրարկման փորձերի մասով:

Գագաթնաժողովի ընթացքում քննարկվել են էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի կարգավորման ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող մի շարք թեմաներ՝ սպառողների պաշտպանության՝ այդ առումով, սպառողների համար էլեկտրոնային հաղորդակցության և թվային ծառայությունների ոլորտում մարտահրավերների, էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի զարգացումն ապահովող հետագա կարգավորման առաջնահերթություններին վերաբերող հարցեր:

7.Հանդիպումները, ելույթները՝ Ֆորումի ընթացքում հանձնաժողովի ներկայացուցիչները հանդիպել են GSMA ասոցիացիայի Եվրոպայի և ԱՊՀ տարածաշրջանների ղեկավարի և GSMA ասոցիացիայի ռազմավարության գծով տնօրենի հետ: Քննարկման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել խորացնել հետագա համագործակցությունը GSMA ասոցիացիայի հետ, դրա շրջանակում դիտարկելով ոլորտի կարգավորմանն առնչվող՝ հանձնաժողովի կողմից առաջնահերթ համարվող մի շարք ուղղություններով (շարժական կապի նոր տեխնոլոգիաների ներդրման, ծառայությունների որակի չափանիշների սահմանման մասով) հետագա սեմինարների, քննակումների, վերապատրաստումների և այլ միջոցառումների կազմակերպումը:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ Ֆորումի օրակարգը և դրա ընթացքում տեղի ունեցած քննարկումների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի են հետևյալ հղմամբ՝ https://www.mwcbarcelona.com/agenda:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝ Առաջարկվում է շարունակել շարժական կապի 5G տեխնոլոգիայի ներդրմանն ու զարգացմանը (ռադիոհաճախականությունների ռեսուրսի տրամադրման, կիրառվող վճարների և պարտավորությունների սահմանման), այդ թվում՝ մասնավոր 5G ցանցերի ներդրմանը, ինչպես նաև էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների որակի չափանիշների սահմանմանը և դրանց հսկողության մեխանիզմներին վերաբերող միջազգային փորձի ուսումնասիրությունները և քննարկել դրանք նաև ՀՀ-ում շարժական կապի 5G տեխնոլոգիայի ներդրման աշխատանքների շրջանակում կիրառելու նպատակահարմարության տեսանկյունից:

Միևնույն ժամանակ, առաջարկվում է շարունակել հետագա համագործակցությունը և համատեղ աշխատանքները ԵՄ ԱլԳ և ԵՄ կարգավորող մարմինների հետ՝ EaPeReg ցանցում գործող աշխատանքային խմբերի շրջանակում հետաքրքրություն ներկայացնող վերը թվարկված թեմաների մասով՝ փորձի ուսումնասիրության ուղղությամբ:

Գործուղվող ---------- 10.03.25թ. ***Ս.Շահինյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 10.03.25թ. ***Ա.Հունանյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը __Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով___

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 020-ՀՆ, 20.01.2025թ. փոփոխում Հրաման 036-ՀՆ 24.01.2025թ**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի անդամ՝ **Սեդա Շահինյան**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչության պետ՝ **Արմեն Հունանյան**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք.**Բարսելոնա** **/Իսպանիայի Թագավորություն /**

5. Գործուղման ժամկետները **02.03.2025-05.03.2025 թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն**)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Սեդա Շահինյան	Արմեն Հունանյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար- հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս)			-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	134,092	134,092	268.185
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)	214	214	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	88,339	88,339	
	Օրերի քանակը	3	3	
	Ընդամենը (դրամ)	275,033	275,033	550.066
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)	110	110	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	45,408	45,408	
	Օրերի քանակը	4	4	
	Ընդամենը (դրամ)	181,632	181,632	363.264
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար	26,400		26.400
	Այլ ծախսեր (*նկարագրել*)	30,382	12,284	42.666
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		647,539	603,041	1,250.581

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 12.03.2025թ.